

46. Բ. Բագունի տոհմ.– Հեթմեանց մեծի զարմին համագոր եւ նախադաս իսկ կարգելոյ ՚ի յիշեալ պատմչէն (Մատթ. Ուռհայեցոյ), վայել էր ունել եւ սերունդս եւ յիշատակս նշանաւորս, որոց չէր իմ պատահեալ ցկէտ տպագրութեան բանիս. իսկ այժմ յիշատակարան մի աւետարանի հրատարակեալ ՚ի հեղինակէ Թորոս Աղբօր, (Բ 348) ցուցանէ մեզ զոմն Պարոն Լեւոն Բագունեանց, եւ զորդիսն Պ. Լեւոն եւ Պ. Բագունէ. այլ զի հայրն եւ որդին համանունաբար Լեւոն կոչին, եւ չիք նշանակ տեղոյ եւ թուականի, քննութեան եւ ստուգութեան կարօտի. ընդօրինակող մատենին՝ «ի ստոյգ եւ յընտիր օրինակէ Ս. Սահակայ Թարգմանչի, յստակ եւ ականակիտ», կոչի սոսկ Սիմաւոն գրիչ: Սմին նման սոսկապէս Սիմէոն գրիչ կոչի եւ ընդօրինակող Ճաշոց գրոց՝ յիշեալ ՚ի տեղագրի Գանձէ դղեկի, յամի 1335. բայց ոչ կարեմ հաստատել զնոյնութիւնն:– Նա եւ Ժամանակագիրն Կիլիկիոյ հաւաստէ մեզ, զի յամի 1368 Պարոն Բագու որդի Բագունենց Պարոն Լեւոնի՝ էր Գունդստապլ Հայոց:

Ընդ Բագունեաց, Արծրունեաց, Հեթմեանց, Նաթանայէլեանց, Ասկուռսեանց տոհմից՝ յարելոց ՚ի Յոյնս, յիշելի են եւ Սովետոնեանք եւ Ապլիասնանք, նոցին համախոհք:

52. Պարոն Լեւոնի գերութիւն.– Յայնմ ժամանակի Ս. Ներսէս Շնորհալի ՚ի միջահասակի տիոցն գլով, ախտակցաբար տրտմութեամբ գրէր՝ ՚ի հնաւանդ օրինակի Առ որս գրոց Աստուածաբանին, զոր եւ զնիւք ասէ թափեալ ՚ի Յունաց, որք կողոպտեալ էին զայն՝ «ի վանորէից Հայոց. յորժամ ել թագաւորն Յունաց յաշխարհն Կիլիկեցոց, եւ ա՛ն զնա յիշխանէն Լեւոնոյ, որ էր Հայ ըստ ազգի եւ ըստ հաւատոյ, եւ աւերեաց զբագում վանորայս եւ զեկեղեցիս, եւ զնշանս տէրունականս խորտակէին, եւ անհնարին հարուածս ազգի մերում հասուցանէին քինաբար: Եւ այս եղեւ ՚ի Թուիս ՇՁԶ (1137). եւ երկրորդ (եւն) նորին արքայի եղեւ ՚ի ՇՂԲ, յորում եւ վախճանի առաջի Անարգաբայ. եւ թագաւորէ կրսեր որդին Մանուիլ անուն»:

52. Բ. Թորոս Բ.– Հետաքննութեան մեծի հրապոյր է նորալուր մականունն Պառաւախեղդ, զոր ընծայէ նմա ժամանակագիրն Աւետիք Տիգրանակերտցի, ոչ զիտեմ յորպիսի տուչութենէ. ցարդ աւանդութիւնն՝